



Լաբորատոր աշխատանք.

«Բնական ներկանյութի անջատումը և կայունության որոշումը»

Աշխատանքի նպատակը. 1. Գործնականում իրականացնել բնական ներկանյութի անջատում բնական աղբյուրից:

Ստուգել դրա կայունությունը՝ կախված միջավայրի թթվայնությունից ու այլ գործոններից:

Որոշ բանջարեղենից կարելի է յուրահատուկ ձևով կորզել ներկանյութեր: Այդ նպատակով որպես ներկ արտադրող հումք կարելի է վերցնել կարմիր կաղամբ, կարմիր ձակնդեղ, գազար, կարմիր սոխի չոր կեղև, մաղադանոս:

Աշխատանքն իրականացնելու համար ձեզ անհրաժեշտ են հետևյալ պարագաները. քերիչ, հավանգ՝ թակիչով, փորձանոթի բռնիչ, 100մլ բաժակներ, 20-մլ փորձանոթ (5-7 հատ), գդալ սպիրտայրոց, ձագար, փորձանոթների կալան, պետրիի թաս, ֆիլտրի թուղթ, պիպետ, չափիչ գլան: Իսկ որպես անհրաժեշտ ազդանյութեր պետք է վերցնել 10-ական մլ 0.1 Մ (մոլյարանոց) աղաթթվի, նատրիումի հիդրօքսիդի, երկաթի (III) քլորիդի, կերակրի սոդայի և ջրածնի պերօքսիդի 3 % լուծույթներ:

Աշխատանքի ընթացքը.

Ա. Բնական ներկի խտանյութի ստացումը:

Քերիչով առանձին-առանձին մանրացնել գազարը, կաղամբը և կարմիր ձակնդեղը: Մաղադանոսը մանր-մանր կտրատել, իսկ կարմիր սոխի չոր կեղևները թակիչով մանրացնել հավանգի մեջ: Հավանգի մեջ առանձին-առանձին տրորել նաև մյուսները և յուրաքայուրից 20-ական գ տեղափոխել տարբեր պիտակավորված բաժակների մեջ: Այնուհետև յուրաքանչյուր բաժակին ավելացնել համապատասխան լուծիչից 30-50մլ:

գազարին՝ հեքսան,
կարմիր կաղամբին՝ ջուր
կարմիր ձակնդեղին՝ ջուր

մաղադանոսին՝ ացետոն

կարմիր սոխի կեղևին՝ ջուր և միայն սոխը եռացնել:

Ստացված խառնուրդները ֆիլտրել: Ստացվում են բնական ներկանյութերի խտանյութեր:

Բ. Բնական ներկանյութերի կայունության որոշում: Փորձանոթների կալանի վրա տեղադրել 5 պիտակավորված փորձանոթ: Յուրաքանչյուրի մեջ լցնել ստացված խտանյութերից 1-2 մլ:

Առաջադրանք 1. Ստուգել ներկանյութերի կայունությունը կալված ջերմաստիճանից: Այդ նպատակով յուրաքանչյուր փորձանոթ սպիրտայրոցի վրա տաքացնել մինչև եռալը: Ինչ եք նկատում: Արդյունքը գրանցեք ստորև աղյուսակում:

Առաջադրանք 2. Ներկանյութերի կայունության ստուգումը ազդանյութերի ազդեցությամբ: Լուծույթների վրա աստիճանաբար կաթիլներով ավելացնել համապատասխան ազդանյութի 1-2 մլ և թափահարել:

Ի՞նչ եք նկատում: Արդյունքը գրանցեք ստորև աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9

ազդանյութ	գազար	կարմիր կաղամբ	կարմիր ճակնդեղ	մաղադանոս	կարմիր սոխի կեղև
տաքացում					
աղաթթու					
նատրիումի հիդրօքսիդ					
երկաթի (III) քլորիդի					
կերակրի սոդայի					
ջրածնի պերօքսիդի 3 %					

Կատարել եզրակացություն _____
